ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համագործակցության մասնակից պետությունների Կառավարությունները (այսուհետ՝ Կողմեր),

ղեկավարվելով "Կրթության բնագավառում համագործակցության մասին" 1992 թվականի մայիսի 15-ի՝ Համաձայնագրի եւ "Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միասնական (ընդհանուր) կրթական տարածություն ձեւավորելու ուղղությամբ համագործակցության մասին" 1997 թվականի հունվարի 17-ի՝ Համաձայնագրի դրույթներով,

ելնելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների կրթական համակարգերի զարգացման խնդիրներից,

գիտակցելով բարձրագույն կրթության բնագավառում նվաճումների համատեղ օգտագործման, ի շահ բարձրագույն կրթության ազգային համակարգերի հետագա զարգացման եւ ընդհանուր կրթական տարածքի ձեւավորման գործողությունների համակարգման անհրաժեշտությունը, ի շահ բարձրագույն կրթության բնագավառում երկարատեւ համագործակցության եւ ինտեգրացիոն գործընթացների խորացման, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրի նպատակների համար տեքստում գործածվող "բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ" հասկացությունը նշանակում է մի Կողմի պետության բարձրագույն ուսումնական հաստատության կառուցվածքային ստորաբաժանում, որը գտնվում է մյուս Կողմի պետության տարածքում եւ իրականացնում է կրթական ծրագրերը ամբողջ ծավալով:

ՀՈԴՎԱԾ 2

Պետական եւ պետական հավատարմագրում (ատեստավորում այն Կողմերի պետությունների համար, որոնց օրենսդրությունը չի նախատեսում հավատարմագրման անցկացում) ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի ստեղծումն իրականացվում է սույն Համաձայնագրի եւ բուհի հիմնադիր պետության կրթության կառավարման պետական մարմինների եւ մասնաճյուղի գտնվելու վայրի պետության որոշումների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 3

Բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղերը ստեղծվում, վերակազմավորվում եւ լուծարվում են մասնաճյուղի գտնվելու վայրի պետության օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով բուհի հիմնադիր պետության օրենսդրությունը:

Կողմերը սույն Համաձայնագրին են համապատասխանեցնում դրա կնքման պահին գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի գործունեությունը:

ՀՈԴՎԱԾ 4

Բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի գործունեության արտոնագրումը, ինչպես նաեւ ատեստավորումը եւ հավատարմագրումը իրականացվում են բուհի հիմնադիր պետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հաշվի առնելով

մասնաճյուղի գտնվելու վայրի պետության օրենսդրությունը:
Բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի ստեղծման եւ գործառնության ֆինանսական ապահովումն իրականացվում է բուհի հիմնադրի հաշվին, ինչպես նաեւ ինքնաֆինանսավորման պայմանով:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 6

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի՝ այլ միջազգային պայմանագրերից (որոնց մասնակից են նրանք) բխող իրավունքներն ու պարտավորությունները, ինչպես նաեւ չի խոչընդոտում Կողմերի միջեւ նոր պայմանագրերի կնքմանը:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագրում Կողմերը կարող են կատարել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող արձանագրություններով եւ ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածով նախատեսված կարգով:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի կողմից Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցագիրը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից: Նշված ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրը գործում է հինգ տարվա ընթացքում եւ ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հնգամյա ժամանակաշրջանով, եթե Կողմերն այլ որոշում չեն կայացնում:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է դրա նպատակներն ու սկզբունքներն ընդունող այլ պետությունների կողմից միանալու համար:
Միացող պետությունների համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթղթերը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 11

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալու ենթադրվող ամսաթվից առնվազն 6 ամիս առաջ ավանդապահին գրավոր ծանուցագիր ուղարկելով:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2001 թվականի սեպտեմբերի 28-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած

յուրաքանչյուր պետության կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի սեպտեմբերի 20-ից: